ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

08.02.2021 *Ք. Իջևան*

ՕՐԱԿԱՐԳ

1. Հաղորդում 2020-2021 ուստարվա II կիսամյակի նախապատրաստական աշխատանքների մասին: /Զեկ.՝ Կ. Պողոսյան/
2. 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակի թեկնածուների առաջադրում: / Զեկուցող՝ Կ. Պողոսյան/
3. Գիտական դրամաշնորհի հատկացման նպատակով անցկացվելիք մրցույթի մրցութային հանձնաժողովի անդամի առաջադրում:/Զեկ.՝ Կ. Պողոսյան/
4. Կրթական ծրագրերի վերանայման հանձնաժողովի և աշխատանքների կատարման ժամանակացույցի հաստատում: /Զեկ.՝ ԿԾ պատասխանատուներ/
5. 1-ին կիսամյակում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքների վերաբերյալ ամբիոնային հաշվետվությունների ներկայացում: /Զեկ.՝ ամբիոնի վարիչներ/
6. 1-ին կիսամյակի պրակտիկաների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացում և 2-րդ կիսամյակի պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների մասին հաղորդում: /Զեկ.՝ ամբիոնի վարիչներ, պրակտիկաների բաժնի վարիչ/
7. Ֆակուլտետի ուստարվա գործունեության աշխատանքային պլանից բխող ֆակուլտետի 2-րդ կիսամյակի գործունեության աշխատանքային պլանի հաստատում: /Զեկ.՝ Կ. Պողոսյան/

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Կ. Պողոսյանը: Զեկուցողը ներկայացրեց 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքը: Առաջին հերթին նա ուշադրություն դարձրեց ֆակուլտետի դասախոսների 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական բեռնվածություններին:

Դեկանը նշեց, որ ուսումնական պարապմունքները կվերսկսվեն փետրվարի իններին: Արդեն պատրաստ են երկրորդ կիսամյակի դասատախտակները, ձմեռային քննաշրջանի 1-ին լուծարքային շրջանի գրաֆիկները: Կ. Պողոսյանը ամբիոնների վարիչներին ևս մեկ անգամ հորդորեց վերջնական տեսքի բերել երկրորդ կիսամյակի առարկայական փաթեթները, հարցաշարերը: Զեկուցողը նշեց, որ համաձարակով պայմանավորված, դասախոսությունները դեռևս կլինեն հեռավար տարբերակով, իսկ գործնական պարապմունքները հիմնականում կիրականացվեն մասնաճյուղում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ. դոցենտ Վ. Աղաբաբյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2020-21 ուստարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Զեկուցողը նշեց այն չափանիշները, որոնք հաղթահարելուց հետո ուսանողը կարող է հավակնել անվանական կրթաթոշակի, որոնք են՝ անառարկելի ակադեմիական բարձր առաջադիմությունը, պատշաճ կարգապահությունը և հասարակական ակտիվությունը: Կ. Պողոսյանը փաստեց, որ ֆակուլտետում ավելացել է անընդմեջ ակադեմիական բարձր առաջադիմություն ցուցաբերող ուսանողների թիվը, և նրանց պետք է խրախուսել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

«Պատմություն» կրթական ծրագրի պատասխանատու Ն. Գրիգորյանը նշեց, որ ուսանողների մեջ իր առաջադիմությամբ, կարգապահությամբ և ակտիվությամբ աչքի է ընկնում 4-րդ կուրսի ուսանողուհի Մարիամ Հրայրի Խուդավերդյանը: Վերջինս մշտապես ակտիվ է թե՛ դասերի ընթացքում, թե՛ հասարակական

հանձնարարություններ կատարելիս, հինգ կիսամյակ անընդմեջ ցուցաբերել է գերազանց առաջադիմություն, ուստի և նպատակահարմար է Մարիամ Խուդավերդյանին առաջադրել «Մխիթար Գոշ» անվանական կրթաթոշակի թեկնածու:

«Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի պատասխանատու Է. Թեմրազյանը նշեց, որ ուսանողների մեջ իր առաջադիմությամբ, կարգապահությամբ և ակտիվությամբ աչքի է ընկնում 4-րդ կուրսի ուսանողուհի Թագուհի Ռոբերտի Մովսեսյանը: Վերջինս մշտապես ակտիվ է թե՛ դասերի ընթացքում, թե՛ հասարակական հանձնարարություններ կատարելիս, յոթ կիսամյակ անընդմեջ ցուցաբերել է գերազանց առաջադիմություն, ուստի նպատակահարմար է Թագուհի Մովսեսյանին առաջադրել «Շառլ Ազնավուր» անվանական կրթաթոշակի թեկնածու:

«Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի պատասխանատու Լ. Թումանյանը առանձնացրեց 4-րդ կուրսի ուսանողուհի Գոհար Աշոտի Մխիթարյանին: Զեկուցողը նշեց, որ վերջինս յոթ կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ունի: Զեկուցողը առաջարկեց Գոհար Մխիթարյանին ներկայացնել որպես «Գրիգոր Նարեկացի» անվանական կրթաթոշակի թեկնածու:

Լ. Թումանյանն առանձնացրեց նաև «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանողուհի Անուշ Եսայիի Խաչատրյանին: Վերջինս երկու կիսամյակ անընդմեջ ցուցաբերել է գերազանց առաջադիմություն: Զեկուցողն առաջարկեց Անուշ Խաչատրյանին ներկայացնել որպես «Վազգեն Սարգսյան» անվանական կրթաթոշակի թեկնածու:

Դեկանը «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի ուսանողներից առանձնացրեց «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի չորրորդ կուրսի ուսանողուհի Միլենա Համազասպի Մելիքսեթյանին: Զեկուցողը նշեց, որ վերջինս վեց կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ունի: Զեկուցողը առաջարկեց Միլենա Մելիքսեթյանին ներկայացնել որպես «Դավիթ Անհաղթ» անվանական կրթաթոշակի թեկնածու:

Զեկուցողը առանձնացրեց նաև նույն կրթական ծրագրի երրորդ կուրսի ուսանողուհի Տաթևիկ Վարուժանի Վասիլյանին: Վերջինս երեք կիսամյակ անընդմեջ ցուցաբերել է գերազանց առաջադիմություն: Տաթևիկ Վասիլյանին զեկուցողն

առաջարկեց ներկայացնել որպես «Մոնթե Մելքոնյան» անվանական կրթաթոշակի թեկնածու:

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի 4-րդ կուրսից առանձնացվեց նաև Լիլիթ Շաքարի Դավթյանը: Վերջինս մշտապես ակտիվ է թե՛ դասերի ընթացքում, թե՛ հասարակական հանձնարարություններ կատարելիս, հինգ կիսամյակ անընդմեջ ցուցաբերել է գերազանց առաջադիմություն, ուստի նպատակահարմար է Լիլիթ Դավթյանին առաջադրել «ԵՊՀ» անվանական կրթաթոշակի թեկնածու:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Դիմել մասնաճյուղի տնօրինությանը՝ հաստատելու Մարիամ Խուդավերդյանին որպես «Մխիթար Գոշ», Թագուհի Մովսեսյանին՝ «Շառլ Ազնավուր», Գոհար Մխիթարյանին՝ «Գրիգոր Նարեկացի», Լիլիթ Դավթյանին՝ «ԵՊՀ», Միլենա Մելիքսեթյանին՝ «Դավիթ Անհաղթ», Անուշ Խաչատրյանին՝ «Վազգեն Սարգսյան» և Տաթևիկ Վասիլյանին՝ «Մոնթե Մելքոնյան» անվանական կրթաթոշակի թեկնածուներ:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Զեկուցողը նշեց, որ նորաստեղծ «Տավուշ» հետազոտական կենտրոնը առաջիկայում նախատեսում է անցկացնել գիտական դրամաշնորհի հատկացման մրցույթներ, և այդ նպատակով անհրաժեշտ է ֆակուլտետի գիտխորհրդի կողմից առաջադրել և հաստատել մրցութային հանձնաժողովի անդամի թեկնածություն: Դեկանը նշեց, որ բոլոր ամբիոններում իրականացվել են քննարկումներ, լսել են բոլոր առաջարկությունները: Ի վերջո, որպես գիտական դրամաշնորհի հատկացման նպատակով անցկացվելիք մրցույթի մրցութային հանձնաժողովի անդամի թեկնածու է առաջադրվել Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Վաչագան Ավագյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը, պ.գ.թ. Դ. Թինոյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը: Նրանք նշեցին, որ ամբիոններում

հանգամանորեն քննարկվել են գիտական դրամաշնորհի հատկացման նպատակով անցկացվելիք մրցույթի մրցութային հանձնաժողովի անդամի թեկնածությունը: Արտահայտվողները բարձր գնահատեցին առաջադրված թեկնածուի գիտական և մասնագիտական որակները:

Տեղի ունեցավ բաց քվեարկություն, որով առաջադրված թեկնածուն միաձայն ընտրվեց:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Քվեարկության արդյունքները հաշվի առնելով՝ Հումանիտար գիտությունների ֆակուլտետի կողմից հաստատել դրամաշնորհի հատկացման նպատակով անցկացվելիք մրցույթի մրցութային հանձնաժողովի անդամ Վաչագան Ավագյանի թեկնածությունը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 4-րդ հարցի մասին զեկուցեցին կրթական ծրագրերի ղեկավարները: Նրանք նշեցին, որ յուրաքանչյուր տարի՝ 2-րդ կիսամյակի սկզբում, անհրաժեշտ է վերանայել կրթական ծրագրերը: Հավելվեց, որ ամբիոնների դասախոսները, եթե ունեն առաջարկներ՝ կապված իրենց կողմից դասավանդվող դասընթաց-մոդուլների հետ /թեմատիկ, մեթոդական, գնահատման չափորոշիչներին առնչվող…/, ապա դրանք ներկայացնեն ամբիոն: Զեկուցողներն իրենց խոսքում շեշտեցին կրթական ծրագրերի վերանայման կարևորությունը, ապա դեկանը ներկաներին ծանոթացրեց կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի և աշխատանքների կատարման ժամանակացույցի հետ: Նշվեց, որ հարցը քննվել է ամբիոնների նիստերում, և ձևավորվել են աշխատանքային խմբեր: Զեկուցողներն առաջարկեցին վերահաստատել ամբիոններում հաստատված խմբերի կազմերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ. Դ. Թինոյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Վերահաստատել ֆակուլտետի՝ ամբիոնների կողմից հաստատված կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի կազմերը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 5-րդ հարցի մասին զեկուցեցին ամբիոնների վարիչները: Նրանք նշեցին, որ I կիսամյակում ունեցել են հետազոտական աշխատանք ներառող մասնագիտական դասընթացներ: Գիտահետազոտական աշխատանքների թեմաները ամբիոններ են ներկայացվել 2020-2021թթ. ուսումնական տարվա սկզբին: Ուսանողները նախօրոք ծանոթացել, ընտրել և սկսել են աշխատանքները: Ողջ կիսամյակի ընթացքում պարբերաբար անդրադարձ է եղել հետազոտական աշխատանքների թեմաներին, և դրանք քննարկվել են թե՛ դասերի ընթացքում /եթե համընկել են ծրագրով նախատեսված նյութի հետ/ և թե՛ դասերից դուրս՝ ZOOM հարթակում կազմակերպված հանդիպումների ժամանակ: Կարևորելով հարցը՝ ամբիոններում քննարկվել են հետազոտական բաղադրիչ ունեցող առարկաները, դրանք ղեկավարած դասախոսները ներկայացրել են համապատասխան հաշվետվություններ:

Զեկուցողներն ընդհանուր առմամբ կարևորեցին հետազոտական բաղադրիչը՝ որպես շատ անհրաժեշտ, ինքնուրույն, ստեղծագործական և հետաքրքիր աշխատանք, որն անհրաժեշտություն է ուսանողի համար:

Զեկուցողները նշեցին, որ ուսանողները պատասխանատվության բարձր զգացումով են մոտեցել հետազոտական աշխատանքներին, և ներկայացվել են լավ աշխատանքներ: Աշխատանքի ընթացքում փորձ է արվել նոր մոտեցումներ ցուցաբերել դասընթացներին, որպեսզի ուսանողները հստակ պատկերացնեն իրենց կատարելիք աշխատանքի նպատակը, խնդիրները և արդիականությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ. դոցենտ Կ. Պողոսյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը: Վերջինս նշեց, որ աշխատանքի ընթացքում ի հայտ են եկել որոշակի դժվարություններ: Աշխատանքը իրականացվում էր դասաժամերի հետ զուգընթաց: Քանի որ ծրագիրն ավարտվում է կիսամյակի վերջում, ապա հնարավորություն չի ընձեռնվում ստուգելու ուսանողների

յուրացրածը առաջին ընթացիկից հետո: Հետազոտական աշխատանքի համար որոշակի խոչընդոտ է ուսանողների գիտական ուսումնասիրություն կատարելու գիտելիքների պակասը, որը հավանաբար պետք է լրացվի ավելի ցածր կուրսերում (ինչպես օգտվել գիտական գրականությունից, հղումներ կատարել, ինչ բաղադրիչներից պետք է կազմված լինի, ինչպես շարադրել և այլն), ինչպես նաև ուսանողների թվաքանակը (մեծ թվով ուսանողների հետ լուրջ գիտական աշխատանք ծավալելու անհնարինությունը):

ՈՐՈՇԵՅԻՆ.

2020-21 ուստարվա 1-ին կիսամյակում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքները գնահատել բավարար:

ԼՍԵՅԻՆ.

Օրակարգի 6-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ՄԿՊԿ բաժնի վարիչ Լ. Բեգինյանը: Զեկուցողը նշեց, որ Հումանիտար գիտությունների կրթական ծրագրերով իրականացվել է 7 պրակտիկա (1 ուսումնական պրակտիկա, 4 մանկավարժական պրակտիկա, 2 արտադրական պրակտիկա):

Ուսումնական պրակտիկան կազմակերպվել է հեռակա ուսուցման «Պատմություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողների համար: Ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացվել են zoom հարթակի միջոցով:

Զեկուցողը նշեց, որ արտադրական (մանկավարժական) պրակտիկաները կազմակերպվել են «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի 3-րդ և 4-րդ կուրսերի համար՝ մասնագիտական ամբիոնի կողմից հաստատված ծրագրային պահանջներին համապատասխան: Մանկավարժի մասնագիտական գործունեության մեջ ուսանողներն ընդգրկվել են պասիվ և ակտիվ շրջափուլերով՝ ապահովելով գործնական գիտելիքների աստիճանական յուրացման շարունակականությունն ու հետևողականությունը:

Հաշվի առնելով «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի ծրագրային խնդիրները՝ այն քննարկվել է Իջևանի թիվ 1 հիմնական դպրոցի տնօրենի հետ, և ձեռք է բերվել համաձայնություն՝ համավարակի պայմաններում պրակտիկան դպրոցում իրակա-

նացնել դասերից հետո: Դպրոցն աջակցել է մասնաճյուղի ուսանողներին՝ համապատասխան գիտելիքներ ձեռք բերելու գործում: Պրակտիկայի ընթացքում ուսանողների հետ աշխատել են դասախոս մեթոդիստը, դպրոցի սոցմանկավարժը և հոգեբանը, կազմակերպվել են հանդիպումներ տնօրենի, արտադպրոցական և արտադասարանական աշխատանքների կազմակերպչի, մեթոդմիավորման նախագահների, դասվարների, զինղեկի, ֆիզղեկի, ուսուցչի օգնականների հետ: Ընթացքին իրազեկ լինելու համար իրականացվել են վերահսկողական աշխատանքներ՝ դպրոց կատարվող այցելությունների միջոցով: Պրակտիկայի վայրում ուսանողի կատարված աշխատանքներն արտահայտվել են օրագրային (փաթեթային) գրառումներում:

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկաները իրականացվել են zoom հարթակի միջոցով (առկա ուսուցման համակարգում՝ ակտիվ, հեռակա ուսուցման համակարգում՝ պասիվ): Առավել դժվարություն է առաջացրել առցանց եղանակով ակտիվ մանկավարժական պրակտիկայի կազմակերպումը: Խնդիրը հնարավոր է դարձել լուծել մեթոդիստ ղեկավարի ճիշտ ընտրության շնորհիվ: Պրակտիկայի ընթացքում ուսանողները ներգրավվել են ակտիվ դասավանդման գործընթացի մեջ (վարել են սիմուլյատիվ դասեր, այսինքն՝ աշխատանք ուսուցչի պաշտոնում): Ծանոթացել են Goggle classroom հարթակին և նրա գործիքակազմին, ստեղծել են Goggle classroom-ի անձնական հարթակներ, որտեղ և պահվել են իրենց կողմից պրակտիկայի ընթացքում ստեղծված բոլոր նյութերը, ծանոթացել են google forms, quzziz, Padlet առցանց կրթական գործիքներին, ակտիվ և փոխներգործուն 20-ից ավելի մեթոդներ կիրառվել են տարբեր առարկաների դասերը պլանավորելիս, պլանավորել և սիմուլյատիվ վարել են դասեր «Մայրենի», «Մաթեմատիկա» և «Ես և շրջակա աշխարհը» առարկաներից: Շարունակել են թղթապանակի վարումը, այն համալրել իրենց վերլուծություններով ու ընդհանրացումներով, կատարել ընդհանրացումներ պրակտիկայի այս փուլի և պրակտիկայի ամբողջ գործընթացի վերաբերյալ:

Մանկավարժի լրացուցիչ որակավորման 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկան ևս իրականացվել է zoom հարթակի միջոցով: Մեթոդիստ ղեկավարներն ընտրվել են ըստ մասնագիտությունների: Կիրառված մոտեցումը դրական է ընդունվել ուսանողների կողմից: Քանի որ դպրոցում իրականացնելու դեպքում հնարավոր կլիներ ապահովել ավելի բարձր արդյունավետություն, ուստի նախորդ կիսամյակում

մասամբ իրականացված մանկավարժի որակավորման պրակտիկան կազմակերպվում է Տավուշի մարզի դպրոցներում՝ ըստ ուսանողների բնակության վայրի:

Արտադրական պրակտիկաները կազմակերպվել են հեռակա ուսուցման «Հոգեբանություն» կրթական ծրագրի 4-րդ և 5-րդ կուրսերում: Ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացվել են zoom հարթակի միջոցով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ. դոցենտ Վ. Աղաբաբյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2020-21 ուստարվա 1-ին կիսամյակի պրակտիկաների անցկացման ընթացքը և 2-րդ կիսամյակի պրակտիկաների նախապատրաստական աշխատանքները գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 7-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Զեկուցողը նշեց, որ համավարակի պայմաններում ֆակուլտետի 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական գործունեությունը կազմակերպված և նպատակային վարելու առումով աշխատանքային պլանում կատարվել են որոշակի փոփոխություններ: Այս փոփոխությունները թույլ են տալիս ֆակուլտետի գործունեությունը դարձնել առավել ճկուն և արդյունավետ: Զեկուցողը հայտնեց, որ աշխատանքային պլանը նախապես քննարկվել է դեկանատի նիստում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ. Դ. Թինոյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի աշխատանքային պլանը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ	Կ. Պողոսյան
ՔԱՐՏՈՒՂԱՐ	Վ. Աղաբաբյան